



Համարը ՀՕ-79-Ն
Տիպը Օրենք
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2005.04.27/24(396)
Հոդ. 482

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով
Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 28.04.2005

Ընդունման ամսաթիվը 22.03.2005
Ստորագրման ամսաթիվը 19.04.2005
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2005 թվականի մարտի 22-ին

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի իրավական և կազմակերպական հիմքերը և կարգավորում է ահաբեկչության դեմ պայքարի իրականացման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Ահաբեկչության դեմ պայքարի նպատակները

- Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի կազմակերպումը նպատակաուղղված է՝
- 1) ահաբեկչական գործունեության նախագոյացմանը, բացահայտմանը, կանխմանը, խափանմանը և դրա հետևանքների նվազեցմանը.
 - 2) ահաբեկչությունից անձի, հասարակության և պետության պաշտպանությանը.
 - 3) ահաբեկչական գործունեությանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտմանը և վերացմանը:

Հոդված 3. Ահաբեկչության դեմ պայքարի իրավական հիմքերը

Ահաբեկչության դեմ պայքարի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության և քաղաքացիական օրենսգրքերը, սույն օրենքը, այլ օրենքներն ու նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

Հոդված 4.

Ահաբեկչության դեմ պայքարի հիմնական սկզբունքները

Ահաբեկչության դեմ պայքարի հիմնական սկզբունքներն են՝

- 1) օրինականությունը.
- 2) նախագրուշացման միջոցառումների գերակայությունը.
- 3) հակաահաբեկչական գործողություններ անցկացնելիս ներգրավվող ուժերի և միջոցների միանձնյա ղեկավարումը.
- 4) ահաբեկչական գործողության կատարման, ինչպես նաև նախապատրաստման և ֆինանսավորման համար պատժի անխուսափելիությունը.
- 5) ծայրահեղ անհրաժեշտության դեպքում ահաբեկչին նվազագույն զիջումներ կատարելը.
- 6) ահաբեկչության դեմ պայքարի բացահայտ և գաղտնի մեթոդների զուգակցումը.
- 7) կանխարգելիչ, իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, քարոզչական միջոցների համալիր օգտագործումը.
- 8) ահաբեկչական գործողության հետևանքով վտանգի ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության գերակայությունը.
- 9) հակաահաբեկչական գործողությունների անցկացման եղանակների, գործելակերպի (մարտավարության) և մասնակիցների կազմի նվազագույն հրապարակայնությունը:

Հոդված 5.

Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

- 1) **ահաբեկչական գործողություն**՝ ահաբեկչական բնույթի հանցագործության անմիջական կատարում՝ պայթյունի, հրկիզման, միջուկային պայթյունիցիկ տարրերի, ռադիոակտիվ, քիմիական, կենսաբանական, պայթուցիկ, թունավորող, ուժեղ ներգործող նյութերի կիրառման կամ դրա սպառնալիքի, տրանսպորտային միջոցների կամ այլ օբյեկտների ոչնչացման, վնասման կամ զավթման, պետական կամ հասարակական գործչի, ազգային, էթնիկական, կրոնական կամ բնակչության այլ խմբերի ներկայացուցչի կյանքի դեմ ոտնձգության, պատանդների վերցման, մարդու առևանգման, տեխնոգեն բնույթի վթարների և աղետների համար պայմաններ ստեղծելու ճանապարհով անորոշ շրջանակի անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու նպատակով վտանգ ստեղծելու կամ այդպիսի վտանգի ստեղծման իրական սպառնալիքի, ցանկացած ձևի և ցանկացած միջոցներով սպառնալիքների տարածման, մարդկային զոհերի, զգալի գույքային վնաս հասցնելու կամ հասարակական վտանգավոր հետևանքներ առաջացնող այլ գործողությունների միջոցով.
- 2) **ահաբեկչական գործունեություն**՝ ահաբեկչական գործողության կազմակերպում, նախապատրաստում և իրականացում, ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների նկատմամբ բռնության, ահաբեկչական նպատակներով նյութական օբյեկտների ոչնչացման հրահրում, ահաբեկչական գործողություն կատարելու համար անօրինական զինված կազմավորման, հանցավոր խմբավորման կազմակերպում, ինչպես նաև մասնակցություն այդպիսի գործողությանը, ահաբեկիչների հավաքագրում, զինում, ուսուցանում, ահաբեկչական կազմակերպության կամ ահաբեկչական խմբի ֆինանսավորում կամ այլ աջակցություն.
- 3) **ահաբեկիչ**՝ ահաբեկչական գործողություն, ահաբեկչական գործողության նախապատրաստում կամ դրա կատարման փորձ կատարած անձ.
- 4) **ահաբեկչության դեմ պայքար**՝ ահաբեկչական գործունեության բացահայտմանը, կանխմանը, խափանմանը, հետևանքների նվազեցմանն ուղղված գործունեություն.
- 5) **հակաահաբեկչական գործողություն**՝ ահաբեկչական գործողության բացահայտմանը, կանխմանը, ինչպես նաև պետության շահերի և ֆիզիկական անձանց անվտանգության ապահովմանը, ահաբեկիչների վնասագործմանը և ահաբեկչական գործողությունների հետևանքների նվազեցմանն ուղղված հատուկ միջոցառումներ.
- 6) **հակաահաբեկչական գործողության իրականացման գոտի**՝ տեղանքի առանձին հատվածներ, տրանսպորտային միջոց, շենք, շինություն, կառույց և դրանց հարող տարածքներ, որոնց սահմաններում անցկացվում է նշված գործողությունը.
- 7) **պատանդ**՝ պետությանը, կազմակերպությանը կամ առանձին անձանց որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով առևանգված կամ պահվող անձ:

Հոդված 6.

Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցությունն ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում

Ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում Հայաստանի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա համագործակցում է օտարերկրյա պետությունների, ինչպես նաև ահաբեկչության դեմ պայքար իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ:

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 7. Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող մարմինները

Ահաբեկչության դեմ պայքարն իրականացնում են պետական կառավարման համակարգի մարմինները՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնող սուբյեկտներն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության պետական կառավարման համակարգի մարմինը.
- 2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական կառավարման համակարգի մարմինը.
- 3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության պետական կառավարման համակարգի մարմինը:

Ահաբեկչության դեմ պայքարին օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում մասնակցում են նաև պետական կառավարման համակարգի մյուս մարմինները:

(7-րդ հոդվածը փոփ. 07.02.18 ՀՕ-98-Ն)

Հոդված 8. Հակահաբեկչական գործողության օպերատիվ շտաբը

Ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնող սուբյեկտների և պետական կառավարման համակարգի մյուս մարմինների գործողությունների համակարգման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետը անհրաժեշտության դեպքում կարող է ձևավորել հակահաբեկչական գործողության օպերատիվ շտաբ, որի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են սույն օրենքի 7-րդ հոդվածում թվարկված պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարները:

Հակահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի կազմում կարող են ընդգրկվել նաև պետական կառավարման համակարգի այլ մարմինների ղեկավարներ:

Հակահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը, իսկ անմիջական ղեկավարումը՝ շտաբի պետը:

Ելնելով ահաբեկչական գործողության կապակցությամբ ձեռնարկվելիք միջոցառումների բնույթից՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հակահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի պետ է նշանակվում սույն օրենքի 7-րդ հոդվածում թվարկված պետական կառավարման համակարգի մարմիններից մեկի ղեկավարը:

(8-րդ հոդվածը փոփ. 07.02.18 ՀՕ-98-Ն)

Հոդված 9. Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող մարմինների հիմնական գործառույթները

Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինները օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում՝

1) մշակում և իրականացնում են ահաբեկչական գործողությունների բացահայտմանը, կանխմանը, խափանմանը, հետևանքների նվազեցմանը, ինչպես նաև դրանց կատարմանը նպաստող պատճառների և պայմանների բացահայտմանը և վերացմանը նպատակաուղղված կազմակերպական, ռեժիմային, կանխարգելիչ, դաստիարակչական և այլ միջոցառումներ:

2) ստեղծում են ահաբեկչության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներ:

3) մասնակցում են ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախապատրաստմանը:

4) մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն են ներկայացնում առաջարկություններ՝ ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման մասին:

(9-րդ հոդվածը փոփ. 07.02.18 ՀՕ-98-Ն)

Հոդված 10. Աջակցությունը ահաբեկչության դեմ պայքարն իրականացնող մարմիններին

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիներն ու կազմակերպությունները (անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից) պարտավոր են աջակցություն ցուցաբերել ահաբեկչության դեմ պայքար իրականացնող մարմիններին իրենց պարտականությունները կատարելիս:

ՀԱԿԱՍԻՏԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ

Հոդված 11. Հակահաբեկչական գործողություններ իրականացնելիս օգտագործվող ուժերն ու միջոցները

Հակահաբեկչական գործողություններն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում են պետական կառավարման համակարգի մարմինները՝ հատուկ ծառայությունների, ահաբեկչության դեմ պայքարի՝ դրանց մասնագիտացված ստորաբաժանումների, այդ թվում՝ հակահաբեկչական մարտական խմբերի ներգրավմամբ:

Հակահաբեկչական գործողություններ իրականացնելիս օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառվում են անհրաժեշտ զենք և հատուկ միջոցներ, տրանսպորտային, կապի և այլ նյութատեխնիկական միջոցներ:
(11-րդ հոդվածը փոփ. 07.02.18 ՀՕ-98-Ն)

Հոդված 12. Հակահաբեկչական գործողության իրականացման գոտու իրավական ռեժիմը

Հակահաբեկչական գործողության իրականացման գոտում հակահաբեկչական գործողություններ իրականացնող անձինք իրավունք ունեն՝

1) անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկելու փողոցներում և ճանապարհներին տրանսպորտային միջոցների և հետիոտնի երթևեկությունը ժամանակավոր սահմանափակելու կամ արգելելու, տեղանքի առանձին հատվածներ և օբյեկտներ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների, այդ թվում՝ դիվանագիտական ներկայացուցիչների, հյուպատոսական հաստատությունների տրանսպորտային միջոցների մուտքը չթույլատրելու, քաղաքացիներին տեղանքի առանձին հատվածներից և օբյեկտներից հեռացնելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցները հեռացնելու:

2) ստուգելու քաղաքացիների (այդ թվում՝ պաշտոնատար անձանց) անձը հաստատող փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում նրանց ինքնությունը պարզելու նպատակով միջոցներ ձեռնարկելու՝ ընդհուպ բերման ենթարկելով:

3) ձեռքարկելու և հակահաբեկչական գործողություններ իրականացնող պետական կառավարման համակարգի մարմիններին կամ հատուկ ծառայություններին ներկայացնելու այն անձանց, ովքեր կատարել կամ փորձել են կատարել հակահաբեկչական գործողություններ իրականացնող անձանց օրինական պահանջների խոչընդոտմանն ուղղված գործողություններ, ինչպես նաև գործողություններ՝ կապված հակահաբեկչական գործողությունների իրականացման գոտի առանց թույլտվության ներթափանցելու կամ դրա փորձի հետ:

4) Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ և օրենքով սահմանված դեպքերում և կարգով անարգել մուտք գործելու (ներթափանցելու) ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող բնակելի և այլ շինություններ, շրջակա տեղանքի հատվածներ, տրանսպորտային միջոցներ (բացառությամբ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչներին պատկանող շինությունների, տարածքների և տրանսպորտային միջոցների)՝ ահաբեկչական գործողությունը կանխելու, ահաբեկչական գործողություն կատարած կամ ահաբեկչական գործողության կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելու համար:

5) հակահաբեկչական գործողության անցկացման գոտի մուտքի և ելքի պարագայում իրականացնելու քաղաքացիների անձնական զննում, տեխնիկական միջոցների կիրառմամբ նրանց մոտ գտնվող առարկաների, տրանսպորտային միջոցների և նրանցով տեղափոխվող ապրանքների ստուգում:

6) ծառայողական նպատակներով օգտագործելու կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կապի միջոցները:

7) անհետաձգելի դեպքերում ծառայողական նպատակներով օգտագործելու ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող տրանսպորտային միջոցները, բացառությամբ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների:

(12-րդ հոդվածը փոփ. 07.02.18 ՀՕ-98-Ն)

Հոդված 13. Բանակցությունների վարումը ահաբեկիչների հետ

Քաղաքացիների կյանքի և առողջության, նյութական արժեքների պահպանման, ինչպես նաև առանց ուժի կիրառման ահաբեկչական գործողության կանխման հնարավորությունն ուսումնասիրելու նպատակով հակահաբեկչական գործողություններ իրականացնելիս թույլատրվում է բանակցություններ վարել ահաբեկիչների հետ:

Ահաբեկիչների հետ բանակցություններ վարում է (են) միայն ահաբեկչության դեմ պայքարի օպերատիվ շտաբի ղեկավարի կամ հակահաբեկչական գործողությունն անմիջականորեն ղեկավարող պաշտոնատար անձի հատուկ լիազորած անձը (անձինք):

Ահաբեկիչների հետ բանակցություններ վարելը ահաբեկիչներին պատասխանատվությունից ազատելու հիմք կամ

պայման չէ:

Հոդված 14. Հակաահաբեկչական գործողության մասին տեղեկատվության սահմանափակումը

Արգելվում է հակաահաբեկչական գործողության մասին այնպիսի տեղեկատվության տարածումը, որը՝
1) բացահայտում է հակաահաբեկչական գործողության իրականացման հատուկ տեխնիկական եղանակներն ու գործելակերպը.
2) կարող է խոչընդոտել հակաահաբեկչական գործողության իրականացմանը և վտանգ ստեղծել քաղաքացիների կյանքի և առողջության համար.
3) ուղղված է ահաբեկչության քարոզչությանը կամ արդարացմանը.
4) տեղեկատվություն է պարունակում հակաահաբեկչական գործողությանը մասնակից պետական կառավարման համակարգի մարմինների, հատուկ ծառայությունների և ահաբեկչության դեմ պայքարի՝ դրանց մասնագիտացված ստորաբաժանումների աշխատակիցների, ինչպես նաև այդ գործողության իրականացմանն աջակցություն ցուցաբերած անձանց մասին:

(14-րդ հոդվածը փոփ. 07.02.18 ՀՕ-98-Ն)

Հոդված 15. Հակաահաբեկչական գործողության ավարտը

Հակաահաբեկչական գործողությունը համարվում է ավարտված, երբ ահաբեկչական գործողությունը կանխված (խափանված) է, և վերացված է հակաահաբեկչական գործողության իրականացման գոտում քաղաքացիների կյանքի և առողջությանը սպառնացող վտանգը:

Գ Լ ՈՒ Խ 4

ԱՀԱԲԵԿՉՍԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱԼՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄԸ ԵՎ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հոդված 16. Ահաբեկչական գործողության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցումը

Ահաբեկչական գործողության հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով:

Հոդված 17. Ահաբեկչական գործողության հետևանքով տուժած անձանց սոցիալական վերականգնումը

Ահաբեկչական գործողության հետևանքով տուժած անձանց սոցիալական վերականգնմանն ուղղված ծառայությունների մատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:
Նշված անձանց իրավական, հոգեբանական, բժշկական և այլ տիպի օգնություն ցուցաբերելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 5

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԱՍՆԱԿԻԳ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 18. Ահաբեկչության դեմ պայքարին մասնակից անձանց իրավական պաշտպանության երաշխիքները

Հանցագործություն չեն համարվում այն գործողությունները, որոնք կատարել են ահաբեկչության դեմ պայքարը իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինների պաշտոնատար անձինք և աշխատակիցները, ինչպես նաև վերջիններիս աջակցություն ցուցաբերած անձինք իրենց ծառայողական պարտականություններն

իրավաչափորեն կատարելիս և ուղղված են եղել քաղաքացիների կյանքի և առողջության, սահմանադրական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև հանցավոր ոտնձգություններից հասարակական և պետական անվտանգության ապահովմանը:

Իրավաչափ են համարվում ահաբեկչության դեմ պայքարի գործողությունները կանոնակարգող նորմերի պահպանումով կատարված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այն գործողությունները, որոնք կատարվել են ծառայողական պարտականությունների շրջանակներում կամ հասարակական պարտքը հատուցելիս և ուղղված են եղել քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև հասարակական և պետական անվտանգությանը սպառնացող առավել նշանակալից վնասի կանխմանը, էթե տվյալ հանգամանքներում ծառայողական պարտականությունների կամ հասարակական պարտքի իրականացման այլ հնարավորություններ չեն ընձեռվել:

Հակաահաբեկչական գործողություն իրականացնելիս օրենքով սահմանված հիմքերով և սահմաններում թույլատրվում է ահաբեկիչների կյանքին, առողջությանը և գույքին, ինչպես նաև այլ պահպանվող շահերին հարկադրված վնաս պատճառելը:

Ահաբեկչության դեմ պայքարի մասնակից անձինք, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ազատվում են հակաահաբեկչական գործողություն իրականացնելիս պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

(18-րդ հոդվածը փոփ. 07.02.18 ՀՕ-98-Ն)

Հոդված 19. Ահաբեկչության դեմ պայքարի մասնակից անձանց սոցիալական պաշտպանության երաշխիքները

Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինների աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների և ահաբեկչության դեմ պայքար իրականացնող պետական կառավարման համակարգի մարմիններին աջակցություն ցուցաբերող անձանց սոցիալական պաշտպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(19-րդ հոդվածը փոփ. 07.02.18 ՀՕ-98-Ն)

Գ Լ ՈՒ Խ 6

ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Հոդված 20. Վերահսկողությունն ահաբեկչության դեմ պայքարի իրականացման նկատմամբ

Ահաբեկչության դեմ պայքարի իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 7

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Հոդված 21. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ռ. Քոչարյան

2005 թ. ապրիլի 19
Երևան
ՀՕ-79-Ն

